իրագործել իր ծրագիրը, այն ժամանակ Վրաստանը օղակված կը լինի քեմալական–բոլշևիկեան ուժերով»։ Նոյնն էր ասում և ազգ.–դեմ. «Սաքարթուելո»–ն. «Ընդհանուր վտանգը թեկադրում է Հայաստանին ու Վրաստանին լարել բոլոր եռանդն ու պահպանել ազգային ազատութիւնը, որ մեր լաւագոյն զաւակների արիւնով է ձեռք բերուած։ Դաւադիր թշնամին վռնդելու համար մենք դինուորական դաշինք պէտք է կապենք... Վրաստանի և Հայաստանի դինուորական դաշինքի հարցը պէտք է մեր ընթացիկ քաղաքականութեան հարցը դառնայ»։ Նմանապէս և սոց.–ֆեդ. «Սախալխո Սաքմէ»ն. «Հայաստանի դժբախտութիւնը մեր՝ Վրաստանի դժբախտութիւնն է. բռնապետական բռունցքը միայն Հայաստանին հարուածելու նպատակով չէ բարձրացած, այլ և Վրաստանի կուրծքը ջախջախելու համար է պինդ սեղմուած։ Հայաստանի դէմ ուղղուած սուրը Վրաստանի ազատութեանն էլ է մահացու հարուած սպառնում»։

Ընդհակառակը, թիւրքերի յարձակումը Հայաստանի վրա անխառն հրճւանք առաջ բերեց բոլշևիկների շարքերում։ Վրաստանի Կոմկուսի պաշտօնաթերթ «Կոմունիստ»–ը (հոկտ. 24), թիւրքերի յառաջխաղացման առթիւ գրում էր ցնծութեամբ. «Մնում է միայն ուրախանալ, որ դաշնակցական Հայաստանը գտնւում է այն պոդահարող կովի դրութեան մէջ, որին Աստուած եղջիւրներ չի տւել»։ Բաղուի «Կոմունիստ»–ը բուռն խմբագրականներ էր գրում ի նպաստ Մուստաֆա Քեմալի և ընդդէմ Հայաստանի։ Պակաս չէին մնում և հայ կոմունիստները. նրանք ևս շարունակում էին կատաղի յարձակումները Հայաստանի վրա և աշխատում էին վարկաբեկել Հայաստանի կառավարութիւնը յաչս Խորհրդային Ռուսաստանի։ Այս տեսակէտից պերճախօս մարդկային վաւերագիր է հետևեալ կոչը՝ ամբողջ աշխարհին, որ հրատարակւեց Բաղուի «Կոմունիստ»–ի հոկտ. 8 համարում։

«Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանւորներին և գիւղացիներին, Կոմունիստական Ինտերնասիոնալին, Արհեստակցական Միութիւնների Միջազգային Խորհրդին և Գործունէութեան ու Պրոպագանդի Խորհրդին.

Ալեկոծուղ Արևելքի սրտում, Անդրկովկասի ու ամբողջ աշխարհի բանւորագիւղացիական լայն զանգւածների համար աննկատելի կերպով, միջազգային իմպերիալիզմի գործակալների — դաշնակների ողորմելի աւազակների կառավարութիւնը դնդակահարում է Հայաստանի լաւագոյն զաւակներին — կոմունիստական կուսակցութեան և արհեստակցական միութեան անդամներին։ Հայաստանի բանտերը լի են կոմունիստներով և ապստամբած բանւորներով ու գիւղացիներով։

Լայն զանգւածների աչքում սնանկացած, բայց ազգայնական պատերազմների փորձով հմուտ «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը՝ ժամանակաւոր յաղթութիւն տանելով ապստամբ բանւորա–գիւղացիական զանգւածների վրա, բռնութիւններ գործ դնելով մահմեդական խաղաղ զանգւածների դէմ, այժմ հաչիւ է տեսնում Հայաստանի ապստամբած բանւորների ու գիւղացիների և նրանց ղեկավարների՝ կոմունիստների հետ։

Հայաստանի կառավարութիւնը հաճեց նորից ու նորից տաքանալ արիւնով՝ այս անգամ կուելով նրանց դէմ, ովքեր ուզում էին բանւորա–գիւղացիական Հայաստանը խլել նրա արիւնոտ ձեռքերից, որպէսզի հաղորդակից անեն նրան աշխատանքի և կապիտալի միջև մղւող մեծ կռուին։

Հայաստանի մռայլ ու խոնաւ բանտերը, որոնք ոչ քիչ կեանքեր խլեցին արիւնալի ցարի օրով, վերածւել են կառավարական տաճարների,